14343
нму.

2790 ա
~~2790~~ ա
237.

ԿԱՆՈՆՆԵՐ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ Ս. ԽԱՉ ՎԱՆՔԻ ՎԱՆԵՑԻՆ ԿԱՌՈՒՎԱՐՈՒԹԵՐՆ:

14343

14343

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆ
տան Սերովբէ Աւագեանի
1907

Իսկականին վերայ ստորագրած է. «Զայս նախագիծ հաստատեմ և տամ 'ի ճիշդ գործադրութիւն իբրև առժամանակեայ փորձ՝ մինչև ի Բարձրագոյն Հոգևոր Իշխանութեան կողմանէ տացի նոր հրահանգ և կանոնադրութիւն վասն կառավարութեան վանօրէից մերոց ընդհանրապէս։ 'ի 10 Յուլիսի 1907 ամի։
Առաջնորդ թեմի Ներսէս արքեպիսկոպոս.

Տ. Կ.

ԿԱՆՈՆՆԵՐ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ Ս. ԽԱՉ ՎԱՆՔԻ ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ։

Ա. ՆՊԱՏԱԿ.

Յօդուած 1. Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքի Վանական կառավարութեան նպատակն է — ա) կառավարել վանքապատկան գոյքերը, կալուածները և այլ հաստատութիւնները, և բ) հոգ տանել այդ կալուածների արդիւնաբերութեան ու վանքի բարեկարգութեան։

Բ. ՄԻՋՈՑՆԵՐ.

Յօդ 2. Վանական Կառավարութեան ձեռքն եղած դրամական միջոցներն են — ա) վանքապատկան անշարժ կալուածների արդիւնքը. բ) Դրամագլխի տոկոսները, և գ) նուիրատուութիւններ և այլ պատահական եկամուտներ։

Գ. ԴՐԱՄԱԳԼՈՒԽ.

Յօդ. 3. Ընդհանուր մուտքի 5—10 տոկոսը կազմում է պահեստի գումար, իսկ մնացեալը ծախսելի։

Ծանօթ. Պահեստի գումարի գործադրութեան ունքը թողնում է Վանական Կառավարութեանը, պատգամաւորաց ժողովի համաձայնութեամբ։

Դ. ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ.

Յօդ. 4. Վանական Կառավարութիւնը կազմում է հինգ անդամից, որոնց մէկն ինքը Վանահայրն է, իսկ չորսը, երկու անձնափոխանորդով, ընտրւում են Նոր-Նախիջևանի Եկեղեցական Հոգաբարձութեան Ծխական Պատգամաւորաց Ժողովի կողմից՝ երեք տարի ժամանակով։ Վանական Կառավարութեան անդամները հաստատւում են Թեմական Առաջնորդից։

Յօդ. 5. Վանահայրը կամ նրան պաշտօնապէս փոխարինող հոգևոր անձը ըստ օրինի նախագահ է Վանական Կառավարութեան, իսկ միւս պաշտօնները որոշում են իրանց մէջ։

Յօդ. 6. Վեց ամիս նիստերին չը մասնակցող անդամը պաշտօնից հրաժարուած է համարւում, որի տեղը բռնում է անձնափոխանորդը։ Վանական Կառավարութեան նիստերին հրաւիրւում են նաև անձնափոխանորդները՝ խորհրդակցական ձայնով. անդամների բացակայութեան դէպքում անձնափոխանորդները նիստերում վայելում են ձայնի իրաւունք։

Յօդ. 7. Վանական Կառավարութեան ընտրեալ անդամներն իրենց պաշտօնը ձրի են վարում՝ բացի Վանահօրից, որը ստանում է Հոգևոր Իշխանութեան

կողմից նշանակուած ռոճիկ, մնունդ և վառելիք։

Յօդ. 8. Վանական Կառավարութեան նիստերն օրինական են, եթէ ներկայների թիւը երեքից պակաս չէ։

Յօդ. 9. Վանական Կառավարութիւնը խնդիրները լուծում է և պատշաճ որոշումներ անում ձայների պարզ առաւելութեամբ. նախագահի ձայնը գերակշռութիւն է տալիս ձայների հաւասարութեան դէպքում։

Յօդ. 10. Վանական Կառավարութիւնը իւրաքանչիւր տարուայ վերջերին կազմում է վանքի ամէն տեսակ եկամուտքի նախահաշիւը առաջիկայ տարուայ համար, որ և Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի կողմից ընդունուելուց յետոյ մատուցւում է Թեմական Իշխանութեանն՝ ի հաստատութիւն։

Յօդ. 11. Վանական Կառավարութիւնը տարուայ սկզբում կազմում է նախընթաց տարուայ եկամուտքի և իւր գործունէութեան մանրամասն հաշիւը և, ոչ ուշ քան մարտ ամիսը, ներկայացնում է այն Պատգամաւորաց Ժողովին և Հոգևոր Իշխանութեանն ըստ սահմանելոյն։

Յօդ. 12. Վանական Կառավարութիւնը տարին առնուազն պիտի ունենայ տասը նիստ, Նոր-Նախիջևանում կամ Ս. Խաչ վանքումը, ըստ յարմարութեան։

Յօդ. 13. Վանական Կառավարութիւնը պահում է նիստերի արձանագրութեան և պարզ հաշուապահական մատեաններ, բացի Հոգևոր Իշխանութեան կողմից տրուած ժապաւինեալ մատեաններից, ևս և վանքի շարժական ու անշարժ կայքի ցուցակը (ինվենտար)։

Յօդ. 14. Վանքի ծառաներին և եկեղեցու սպասաւորներին վարձելու և արձակելու իրաւունքը Վանահօրն է պատկանում։

Ե. ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ:

Յօդ. 15. Եկեղեցական Հոգաբարձութեան Ծխական Պատգամաւորաց Ժողովը Վանական Կառավարութեան չորս անդամից զատ՝ ընտրում է նաև երեք հաշուատես երեք տարի ժամանակով, որոնց պարտականութիւնն է քննել եւումից մատեաններն ու հաշիւները՝ առնուազն տարին մի անգամ։ Քննիչ Յանձնաժողովի անդամները հաստատւում են Թեմական Առաջնորդից։

Զ. ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱՑ ԺՈՂՈՎ:

Յօդ. 16. Նոր-Նախիջևանի Եկեղեցական Հոգաբարձութեան ծխական պատգամաւորները համարւում են նաև Վանական Կառավարութեան Ընդհանուր Ժողովի պատգամաւորներ։

Յօդ. 17. Ծխական պատգամաւորների թէ սովորական և թէ արտակարգ ընդհանուր ժողովները գումարւում են Վանական Կառավարութեան որոշման համաձայն, նորա նախագահի հրաւէրով։ — Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը օրինական է համարւում, երբ նիստին ներկայ են պատգամաւորների ընդհանուր թուի կէսից աւելին։ Առաջին ժողովը չըկայանալու դէպքում, ամենաշատը երկու շաբաթուայ ընթացքում, գումարւում է երկրորդ ժողով, որ և օրինապէս կայացած է համարւում, չընայած նիստին ներկայ գտնուած պատգամաւորների թուին։ Պատգամաւորաց Ընդհանուր Ժողովն ինքն է ընտրում իրեն նախագահողը։

Է. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ:

Յօդ. 18. Վանքին պատկանեալ դրամները պահւում են դրամանոցում Վանքի անունով։ Դրամանոցից դրամ յետ ստանալ կարելի է վանահօր և վանական կառավարութեան մի անդամի ստորագրութեամբ։

Յօդ. 19. Այս կանոնագրութեան յօդուածների մէջ փոփոխութիւն, յաւելումն կամ յապաւումն կարող է տեղի ունենալ միայն Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի որոշմամբ և Հոգևոր Իշխանութեան հաւանութեամբ և հաստատութեամբ։ Կանոնագրութեան փոփոխութեան համար գումարուած Պատգամաւորական Ընդհանուր Ժողովները կայացած կը համարուին, եթէ պատգամաւորների ընդհանուր թուի $^{2}/_{3}$-ը նիստին ներկայ է. իսկ խնդրի լուծումը կարող է տեղի ունենալ ներկայների $^{3}/_{4}$-ի ձայների մեծամասնութեամբ։

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL014817